ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի 6 փողոցի թիվ 15 տարածքում դպրոցի կառուցման նախագծի և շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկում

2024թ. ապրիլի 23-ին՝ ժամը 14:30-ին, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի տեղի ունեցավ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն բնակավայրի 6 փողոցի թիվ 15 տարածքում դպրոցի նախագծի և նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հանրային քննարկումը (1-ին փուլ):

Հանրային քննարկման մասին հայտարարությունը սույն թվականի մարտի 23-ին տեղադրվել է "Առավոտ" օրաթերթում, ինչպես նաև փակցվել է Բագրատաշենի վարչական շենքի հայտարարությունների համար նախատեսված տախտակին:

Ծրագրի անվանում՝ Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների ծրագիր

Ծրագիրն իրականացնող պատվիրատու կազմակերպություն՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ),

Կառուցապատող կազմակերպություն՝ «Վի Քեյ գրուպ» ՍՊԸ

<u>ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ</u>

Ս.Անտոնյան	Բագրատաշեն բնակավայրի վարչական ղեկավար
Զ.Անտոնյան	Բագրատաշեն դպրոցի տնօրեն
Հ. Քոթանջյան	«Վի քեյ գրուպ» ՍՊԸ շինկազմակերպության տնօրեն
Խ. Բուդումյան	"Հալդի Քոնսալթ" ՍՊԸ-ի ներկայացուցիչ
Ռ. Վարդանյան	ՀՏԶՀ, բնապահպանության մասնագետ

համայնքի ներկայացուցիչներ և դպրոցի ուսուցիչներ

Ելույթ ունեցան

Բացման խոսքով հանդես եկավ Բագրատաշեն բնակավայրի վարչական ղեկավար Ս.Անտոնյանը, խոսքը փոխանցեց պատվիրատու կազմակերպության ներկայացուցիչ՝ Ռ.Վարդանյանին:

Ռ. Վարդանյանը ներկայացրեց, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի նախատեսվող գործունեությունը դասվում է "Բ" կատեգորիայի, և նախատեսվում է երկու հանրային լսում՝ շահագրգիռ անձանց տեղեկացնելու նախատեսվող գործունեության մասին: Ներկայացրեց հնարավոր բնապահպանական ազդեցությունները և մեղմացնող միջոցառումները: Նշեց որ ազդեցությունները կրելու են տեղային բնույթ, փոշու արտանետումների, աղմուկի և թրթռումների հետ կապված սպասվելիք ազդեցությունները և մեղմացնող միջոցառումները:

Նախագծող կազմակերպության ներկայացուցիչ Խ.Բուդումյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեսակը: Նշեց, որ իրականացվելու է Բագրատաշեն բնակավայրում 432 տեղանոց դպրոցի կառուցում, դպրոցի նման նախագծեր արդեն իսկ կառուցվել են հանրապետության տարբեր մարզերում, կատարվելու է տեղակապում Բագրատաշեն բնակավայրում: Դպրոցի մակերեսը մոտավորապես 3240 ք.մ է: Երկհարկանի դպրոց է կառուցվելու, լինելու է սպորտդահլիճ առաջին հարկում 1-ին ից մինչև 5-րդ դասարանների լսարանները, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը,

ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն, սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Երկրորդ հարկում տեղակայված են 6-ից մինչև 12- րդ դասարանների լսարանները, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոցմեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը իրեն կից լաբորատորիայով, Դպրոցի հատակագծային լուծումներում հաշվի են առնված սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, ադմինիստրատիվ մասնաշենքեր, նոր կաթսայատուն, բացօթյա մարզահրապարակ:

Մասնակիցները բարձրաձայնեցին իրենց հարցերը

Հարց 1: Ինչպես է ապահովվելու դպրոցի ջեռուցումը:

Պատասխան 1: Նոր կառուցվող կաթսայատան և արևային պանելների միջոցով:

Հարց 2: Հովացման և օդափոխության համակարգեր լինելու՞ են:

Պատասխան 2: Լինելու է օդափոխության համակարգ, հովացման համակարգ չի նախատեսվում:

Հարց 3: Լողավազան լինելու է՞:

Պատասխան 3: Ոչ, լողավազան նախատեսված չէ:

Նիստը վարող՝

Բագրատաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Ս.Անտոնյան

Նիստը արձանագրեց՝

Բագրատաշեն բնակավայրի համայնքի աշխատակից, օպերատոր՝ Ն.Բաղդասարյան

Ձեռնարկող՝

«Վի քեյ գրուպ» ՍՊԸ շինկազմակերպության տնօրեն՝ Հ. Քոթանջյան